Հաշվետվություն

2022 թվականի հուլիսի 11-ից 14-ը Իսպանիայի Թագավորություն (Մադրիդ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իսպանիայի Թագավորություն, Մադրիդ, հուլիսի 11-ից 14-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Իսպանիայի Թագավորության կադաստրի գլխավոր տնօրենություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Նոր գործընկերային հարաբերությունների հաստատում,
   - Փոխըմբռնման և համագործակցության հուշագրի ստորագրում,
   - Մասնագիտական բնագավառում միջազգային փորձի փոխանակում:

Քննարկված թեմաները.

Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.

- Իսպանիայի կադաստրային տվյալների մոդելը և կադաստրային տեղեկատվության համակարգը,
- Կադաստրային տվյալների մոդելի և կադաստրային տեղեկատվության համակարգի ստեղծումն ու գնահատումը թվային վերափոխման գործընթացի շրջանակներում,
- Հայաստանի կադաստրային տվյալների մոդելը և կադաստրային տեղեկատվության համակարգը,
- Կադաստրային քարտեզագրական տվյալների տարածումը,
- Տարածական տեղեկատվության ենթակառուցվածքը Եվրոպայում (INSPIRE) և Իսպանիայի տարածական տվյալների ենթակառուցվածքը (IDEE) դիրեկտիվներ,
- Կադաստրային գրանցման համակարգումը, դրա համար կիրառվող էլեկտրոնային գործիքները:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Իսպանիայի Թագավորության կադաստրի գլխավոր տնօրենություն կատարած այցի ընթացքում ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարը հանդիպումներ է ունեցել Կադաստրի գլխավոր տնօրենության տնօրենի հետ, որի շրջանակներում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները և ստորագրված հուշագրով նախատեսված ոլորտներում համագործակցության հեռանկարները:

Եռօրյա հանդիպումներին մասնակցել են նաև Իսպանիայի Թագավորության կադաստրի գլխավոր տնօրենության առաջատար մասնագետներ, որոնց հետ քննարկումներում ներկայացվել են Իսպանիայի կադաստրի թվայնացման գործընթացները, դրանց ազդեցությունը կադաստրային տեղեկատվության փոխանակման և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավման վրա:

Սուրեն Թովմասյանը ևս ներկայացրել է Հայաստանի կադաստրային համակարգի ընթացիկ իրավիճակը, վերջին ձեռքբերումները և նախաձեռնված բարեփոխումները: Կողմերը կարևորել են բարեփոխումների համատեքստում միջազգային համագործակցության դերն ու նշանակությունը, հաջողված փորձի փոխանակումը և այդ ուղղությամբ հետագա աշխատանքների շարունակականության ապահովումը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի շրջանակներում Իսպանիայի Թագավորության կադաստրի գլխավոր տնօրենության և ՀՀ կադաստրի կոմիտեի միջև ստորագրվել է փոխըմբռնման և համագործակցության հուշագիր, որը ներառում է երկու երկրների լիազոր մարմինների միջև համագործակցությունը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների կադաստրային գրանցման, կադաստրային գնահատման և թվայնացման, սեփականության իրավունքի պաշտպանության, լավագույն փորձի և հմտությունների փոխանակման, մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպման ուղղություններով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.

Կոմիտեի ղեկավարի այցը հատկանշական էր այն առումով, որ Իսպանիայի Թագավորության կադաստրի գլխավոր տնօրենության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում հնարավորություն է ունեցել տեղում ծանոթանալու Իսպանիայի լիազոր մարմնում մշտապես իրականացվող բարեփոխումներին, կադաստրի համակարգում ներդրվող նորարարություններին և դիտարկելու

Կադաստրի կոմիտեում Իսպանիայի հարուստ փորձը կիրառելու հնարավորությունը:

Աշխատանքային հանդիպումների արդյունքում երկուստեք պայմանավորվածություն է ձեռքբերվել շարունակել և ամրապնդել երկկողմ համագործակցությունը, որը բխում է նաև Իսպանիայի Թագավորության կադաստրի գլխավոր տնօրենության և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից ստորագրված փոխըմբռնման հուշագրի պահանջներից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 18.07.2022 թ.